07.02.2020թ.
գ. Ծաղկունք

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019Թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020 թվականի փետրվարի 07-ին ժամը 14^{00}-ին Արմավիրի մարզի Ծաղկունքի համայնքապետարանում կայացավ համայնքի բնակիչների ընդհանուր ժողով: Ժողովին ներկա էին համայնքի ավագանու անդամները, համայնքապետարանի աշխատակիցները, Արմավիրի փոխմարզպետ Կարեն Գրիգորյանը և համայնքի բնակիչները:
Օրակարգում՝ Ծաղկունք համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2019 թվականի տարեկան գործունեության և 2019 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ:

I. Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների բնագավառ

2019 թվականի ընթացքում բնակիչներից ստացվել են 128 տարբեր բնույթի դիմումներ, համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է թվով 87 որոշումներ, արձակվել է թվով 20 կարգադրություն, գումարվել է ավագանու 12 նիստ, որից 6-ը արտահերթ, քննարկվել են համայնքի շահերի վերաբերվող հարցեր, ընդունվել է 43 որոշում, տրվել է տարբեր բնույթի 284 տեղեկանքներ, 8 բնութագիր, 2019թ ընթացքում համայնքի ղեկավարի կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցել են 27 քաղաքացիներ:

II. Ֆինանսների բնագավառ

Համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել 2019 թվականի ընթացքում համայնքի բյուջեի փոփոխությունները, բյուջեի կատարման ընթացքի մասին եռամսյակային հաղորդումները:
Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի վարչական բյուջե է մուտքագրվել ընդամենը 36 915,8 հազ.դրամ գումար, որը կազմում է բյուջեի տարեկան կատարման 101,1 %-ը,

	2019թ.			
	Տարեկան պլան	հաշվետու ժամանակ.	Փաստացի կատար.	%
1.Հարկային եկամուտներ	12250.0	12250.0	12951.8	105.7
1.1 Հողի հարկ	5300.0	5300.0	6032.5	113.8
1.2 Գույքահարկ շինություններից	1550.0	1550.0	1804.2	116.4
1.3 Գույքահարկ փոխադրամիջոց.	5400.0	5400.0	5115.1	94.7
2. Ընդամենը տեղական տուրք	**634.0**	**634.0**	**697.0**	**109.9**
Նոր կառուց. օբյեկ. շին.թույլտ.	30.0	30.0	290.0	966
Օբյեկտների վերակառուցելու համար	3.0	3.0	-	-
Օբյեկտների քանդման համար	5.0	5.0	-	-
Ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվ	160,0	160.0	80.0	50
Բացօթյա վաճառք				
ա/ գազ և վառելիքաքսայուղային	400,0		300.0	75.0

նյութեր		400.0		
Գովազդի տեղ. թույլտվություն	36,0	36.0	27.0	75.0
3.Պետ. բյուջեից դոտացիա	**19292.0**	19292.0	19292.0	100.0
4. Այլ եկամուտներ				
Տեղական վճար	1114.0	1114.0	834.6	75.0
այդ թվում՝ աղբահանություն	1100.0	1100.0	830.6	75.5
Ինքնակամ շին. օրինականաց.	2710.0	2710.0	2709.6	100
հողի վարձակալությունից վճար	486.8	486.8	430.8	88.4
Ընդամենը վարչ. բյուջե	**36486.8**	**36486.8**	**36915.8**	**101.1**
Ընդամենը ֆոնդ. բյուջե	**28543.5**	**28543.5**	**28543.5**	**-**
Պետության կողմից սուբվենցիա	**-**	**-**	**17894.5**	**-**
Ընդամենը	**65030.3**	**65030.3**	**83353.8**	**128.1**

2. Ծաղկունք համայնքի 2019թ. բյուջեի ծախսերի կատարման հաշվետվությունը ըստ գործառնական դասակարգման 2019 թվականի բյուջեից կատարվել է ծախսեր ընդամենը 47353.6 հազ. դրամ, որը կազմում է բյուջեի 72.8%-ը

Ծախսերի անվանումը	2019թ.			
	Տարեկան պլան	հաշվետու ժամանակ.	Փաստացի կատար.	%
Վարչական բյուջեի ընդամենը	**36486.8**	**36486.8**	**29563.8**	**81.0**
01.1.1 Տեղական ինքնակառավարում	20585.8	20585.8	19511.6	94.7
01.6.1 Համայնքային այլ ծառայություններ	1810.0	1810.0	1312.8	72.5
02.2.1 Քաղաքացիական պաշտպանություն	970.0	970.0	-	-
4.2.1 Գյուղատնտեսություն	450.0	450.0	428.4	95.2
4.2.4 Ոռոգում	6821.4	6821.4	3410.7	50.0
6.3.1 Ջրամատակարարում	835.0	835.0	83.8	10.0
05.1.1 Շրջակա միջավայրի պաշտպանություն	996.0	996.0	996.0	100.0
08.2.4 Այլ մշակութային կազմակերպություններ	1518.6	1518.6	1320.5	86.0
10.7.1 Սոցիալական հատուկ արտոնություններ՝ սոցօգնություն	2500.0	2500.0	2500.0	100.0
Պահուստային ֆոնդ	0	0	0	0
Ֆոնդային բյուջե ընդամենը	**28543.5**	**28543.5**	**17789.8**	**62.3**
• Շենքերի և շինությունների շինարարություն	25447.5	25447.5	15381.8	60.4
• Վարչական սարքավորումների ձեռք բերման ծախսեր	2496.0	2496.0	1808.0	72.4
• Նախագծահետազոտական ծախսեր	600.0	600.0	600.0	100.0
Ընդամենը ծախսեր	**65030.3**	**65030.3**	**47353.6**	**72.8**

Ծաղկունք համայնքի 2019թ կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը

Համայնքապետարանի աշխատակազմի աշխատավարձի վարձատրություն ընդամենը՝ 17 106,4 հազ. դրամ, գործուղման ծախսեր՝ 22,9 հազ. դրամ, էներգետիկ և կապի ծառայությունների դիմաց ծախսվել է 930,3 հազ. դրամ, կոմունալ ծառայություններ հոդվածից 1 479,8 հազ. դրամ, որից աղբահանության վճար՝ 996,0 հազ. դրամ, 400,0 հազ. դրամ համայնքում գյուղամիջյան առուների, ճամփեզրերի մաքրում, 83,8 հազ. դրամ համայնքի խմելու ջրի համար, համակարգչային և տեղեկատվական ծառայությունների դիմաց ծախսեր՝ 163,2 հազ. դրամ: Մասնագիտական և ընդհանուր բնույթի ծառայություններ հոդվածով կատարվել է ծախս 1 241,2 հազ. դրամ, որից՝ 40,0 հազ. դրամ կրակմարիչների լիցքավորում, 722.8 հազ. դրամ արտաքին լուսավորության մոնտաժի և լուսատուների տեղադրման համար, 50.0 հազ. դրամ գյուղ. նշանակության հողերի ագրոքիմիական քարտեզագրման և լաբորատոր հետազոտության համար, 428,4 հազ. դրամն էլ համայնքը սպասարկող անասնաբույժի ծառայությունների վճար: Համակարգիչների վերանորոգում և քարտրիջների լիցքավորում 100.0 հազ. դրամ: Ձեռք է բերվել գրասենյակային պիտույքներ 150,0 հազ. դրամ, ավտոմեքենայի բենզին 798,8 հազ. դրամ, հատուկ նպատակային նյութեր ընդամենը՝ 1 660,6 հազ. դրամ, որից՝ 599.4 հազ. դրամ Մարտի 8-ի կապակցությամբ ձեռք է բերվել նվերներ, 150.1 հազ. դրամ Վերջին զանգին համայնքի շրջանավարտների համար հուշանվերներ, 340.0 հազ. դրամ համայնքում կազմակերպված շաբաթօրյակների համար օգտագործվող նյութեր, պարագաներ և տնտեսական նյութեր, 171,1 հազ. դրամ առաջին դասարան հաճախող աշակերտներին դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքների հավաքածուներ գնելու համար, 400,0 հազ. դրամ համայնքի երեխաներին ամանորյա նվերներ գնելու համար: Վարչական սարքավորումներ հոդվածից փոխանցվել է 1 808,0 հազ. դրամ, որից 288,0 հազ. դրամ համայնքապետարանի համար ձեռք է բերվել սառնարան, փոշեկուլ և հովհար, 1 520,0 հազ. դրամ համայնքում արտաքին լուսավորություն անցկացնելու համար սարքավորումներ ձեռք բերելու նպատակով, նախագծահետազոտական ծախսեր հոդվածից փոխանցվել է 600.0 հազ. դրամ, համայնքում սուբվենցիայի ծրագրի շրջանակներում խմելու ներքին ջրագիծերի կառուցման համար ծախսվել է 15 381,8 հազ. դրամ:

Սոցիալական աջակցության՝ սոցօգնության գծով ծախսվել է 2 500,0 հազ. դրամ, որը ավագանու որոշմամբ հատկացվել է համայնքի թվով 66 սոցիալապես անապահով պայմաններում ապրող ընտանիքներին:

Կապիտալ դրամաշնորհներ հոդվածից ոռոգման ներտնտեսային ցանցի արդիականացման և վերականգնման ծրագրի շրջանակներում համայնքի բյուջեից հատկացվել է 3 410,7 հազ. դրամ:

III. Պաշտպանության բնագավառ

Հաշվետու ժամանակաշրջանում զինկոմիսարիատ է ներկայացվել տեղեկատվություն համայնքում հաշվառված ինչպես նաև առկա բայց համայնքում չհաշվառված սարքին և անսարք ավտոտեխնիկայի վերաբերյալ : 2019թ. հունվարին համայնքից հայոց բանակ են զորակոչվել թվով 6 պատանիներ: Համաձայն ներկայացված ծանուցումների՝ պատանիները ներկայացվել են Էջմիածնի զին. կոմիսարիատ բուժզննում անցնելու և կցագրման համար: Սահմանված կարգով ներկայացվել է կցագրման ենթակա 2004 թվականին ծնված պատանիների անվանացանկը: Օրենքով սահմանված կարգով վարվել է համանքի զինապարտների գրանցամատյանը: Ուշադրության կենտրոնում են պարտադիր զինվորական ծառայության մեկնած զինակոչիկներն ու նրանց ընտանիքները:

IV. Բնակչության և քաղաքացիական պաշտպանության բնագավառ

Հաշվետու ժամանակաշրջանում բնակչության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

- համաձայն քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման հիմնական միջոցառումների պլանի, համայնքում կազմակերպվել և անցկացվել է շտաբային ուսունմավարժություն՝ <<Ջրածածկման վտանգի դեպքում համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպումը>> թեմայով:
- հսկողություն է իրականացվել բուսածածկ տարածքներում հրդեհային անվտանգության պահանջների ապահովման նկատմամբ

V. *Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսության բնագավառ*

- Օրենքով սահմանված կարգով համաձայնեցվել է ճարտարապետաշինարարական նախագծերը,
  - Տրվել է 13 հատ շինարարության թույլտվություն
  - 3 հատ շինարարության թույլտվության գործողությունների ժամկետի երկարաձգում
  - Տրվել է ավարտված շինարարությունների շահագործման փաստագրման 2 ակտ
  - Տրվել է արտաքին գովազդ տեղադրելու 1 թույլտվություն
  - Տրվել է հեղուկ վառելիքի վաճառքի 2 թույլտվություն
  - Կասեցվել է համայնքում կատարվող ինքնակամ շինարարությունները
  - Կայացվել է ինքնքկամ շինարարությունների օրնականացման 5 որոշում
  - Կատարվել են հասցեների ճշտումներ, նոր հասցեների տրամադրում
  - Կատարվել է ինչպես շրջակա միջավայրի պաշտպանություն, այնպես էլ գյուղամիջյան առուների ու ճամփեզրերի մաքրում
  - Սահմանված կարգով կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել համանքի սանիտարական մաքրման սխեման
  - Հնարավորինս պատշաճ կերպով համայնքում կատարվել է աղբահանության աշխատանքներ
  - 2019 թվականի մարտի 23-ին և հունիսի 8-ին համաձայն շաբաթօրյակի գործողությունների պլանի՝ համայնքի վարչական տարածքում կազմակերպվել և անցկացվել է շաբաթօրյակ
  - Համայնքի Պ. Սևակ, Պարոնյան, Սայաթ-Նովա, Սայաթ-Նովա փկղ., Չարենց, Թումանյան 1, Թումանյան 2, Տերյան փողոցներում անցկացվել է արտաքին լուսավորություն, 145 հատ հենասյուների վրա կատարվել է մոնտաժման աշխատանքներ, տեղադրվել է 83 հատ ԼԵԴ լուսատու սարքավորումներ
  - Համայնքի տարածքում սուբվենցիոն ծրագրի շրջանակներում կատարվել է համայնքի խմելու ջրագծերի կառուցման և վերականգնման աշխատանքներ 6620մ, ծրագրի արժեքի 45%-ը (15 411,6 հազ. դրամ) եղել է համայնքի մասնակցությունը, 55%-ը՝ պետության (18 836,4 հազ. դրամ), ծրագրի կատարմամբ համայնքն ապահովված է 100 % շուրջօրյա ջրամատակարարմամբ
  - ոռոգման ներտնտեսային ցանցի արդիականացման և վերականգնման ծրագրի շրջանակներում համայնքի բյուջեից հատկացվել է ծրագրի արժեքի 10%-ի համաֆինանսավորում (6 821,4 հազ. դրամ), որի արդյունքում կվերականգնվի ոռոգման ներտնտեսային ցանցի շուրջ 1770մետրը

- սահմանված կարգի համաձայն կազմակերպվել է համայնքի գերեզմանատան գործունեությունը, պահպանումն ու հսկողությունը:

VI. Հողօգտագործման բնագավառ

Օրենքով սահմանված կարով վերահսկողություն է իրականացվել համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի սեփականության հողատեսքերի աճուրդ-վաճառքներ չի իրականացվել: Սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը և կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռը՝ 01.07.2019թ. դրությամբ, որը հաստատվել է ավագանու կողմից:

VII . Տրանսպորտի բնագավառ

Համայնքային ենթակայության ճանապարհների վրա իրավասության սահմաններում կազմակերպվել է ճանապարհային անվտանգ երթևեկությունը:

VIII. Առևտրի և սպասարկման բնագավառ

1. Համաձայն առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության կանոնների հաշվետու ժամանակաշրջանում տրամադրվել է 3 թույլտվություն համայնքի տարածքում ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի համար, հեղուկ վառելիքի վաճառքի բացօթյա վաճառքի 2 թույլտվություն, արտաքին գովազդի տեղադրման համար տրվել է 1 թույլտվություն:
2. Հսկողություն է կատարվել նշված վայրերի հասարակական զուգարանների առկայության, սանիտարական մաքրման և օրենքի չափանիշներին համապատասխանելու մասով:
3. Հսկողություն է սահմանվել արագ փչացող սննդի, առևտրային կանոնների խախտման նկատմամբ: Տրվել է զգուշացում անչափահասներին և 16 տարին չլրացած պատանիներին ծխախոտի և ալկոհոլային խմիչքի վաճառքն արգելելու համար: Հսկողություն իրականացնելու ընթացքում խախտումներ չեն արձանագրվել:

IX. ***Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ***

Առողջապահության ոլորտում տարբեր ծրագրերի շրջանակներում համայնք են այցելում բժիշկ-մասնագետներ՝ ազգաբնակչության առողջական խնդիրները ստուգելու, համապատասխան բուժզննում իրականացնելու և խորհրդատվություն տրամադրելու նպատակով:

Համայնքի ղեկավարը մշտապես նպաստել է համայնքում գործող <<Արմֆայթինգ>> մարզական ակումբին, որը նպաստում է համայնքի երեխաների ֆիզիկական պատրաստվածությանը, առողջ ապրելակերպին և սպորտի զարգացմանը:

X . **Կրթության մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում**

Համայնքում չկա դպրոց, մանկապարտեզը չի գործում, հաշվետու ժամանակաշրջանում չի գործել նաև համայնքի գրադարանը:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքում կազմակերպվել են հետևյալ միջոցառումները՝

1.Մարտի 8-ի կապակցությամբ համայնքի մեծահասակ կանանց, ուսուցչուհիների, բուժաշխատողների, համայնքապետարանում աշխատող կանանց և աղջիկների համար ձեռք է բերվել նվերներ /սուրճի բաժակներ/ և հանձնվել վերջիններիս

2. Վերջին դասի /զանգի/ կապակցությամբ դպրոցում իրականացվող միջոցառման կապակցությամբ ձեռք է բերվել հուշանվերներ /Աստվածաշունչ փայտե կազմով քանդակազարդ/ և հանձնվել է համայնքի շարքանավարտներին:

3. 2019-2020թթ ուսումնական տարվա առաջին դասարան հաճախող աշակերտներին տրվել են դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքների հավաքածուներ

4. ՀՀ Անկախության տոնի կապակցությամբ կազմակերպվել է ծաղկեղրում զոհված ազատամարտիկի շիրիմին

5. Երկրաշարժի զոհերի հիշատակի և աղետների դիմակայության օրվա հետ կապված համայնքում կազմակերպվել է սեմինար <<Ինչպե՞ս դիմակայել աղետներին>> խորագրով

6. Ամանորյա տոներին ընդառաջ համայնքի երեխաներին հանձնվել է նվերներ:

XI. Սոցիալական պաշտպանության բնագավառում

2019 թվականի ընթացքում համայնքի թվով 66 սոցիալապես անապահով պայմաններում ապրող ընտանիքներին ավագանու որոշմամբ համայնքի բյուջեից տրամադրվել է դրամական օգնություն՝ փոխանցելով 2 500,0 հազ. դրամ:

Այս ոլորտում սոցիալական վիճակի մեղմացմանն ուղղված աշխատանքները նպաստում են սոցիալական պայմանների բարելավմանը:

XII. Գյուղատնտեսության բնագավառում

Գյուղատնտեսության բնագավառում հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել և անմիջական հսկողություն է իրականացվել ոռոգման ջրերի անխափան մատակարարումն իրականացնելու համար:

Կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության հակահամաճարակային միջոցառումներ, կենդանիների հիվանդությունների կանխման աշխատանքներ: Անմիջական վերահսկողության և աշխատակազմի միջոցով կազմակերպվել և վիճակագրական վարչություն է ներկայացվել համայնքում գյուղատնտեսական կենդանիների հաշվառման, զանրանացանի, գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքի և աշնանացանի ընթացքի մասին հաշվետվությունները: 2019թ. համայնքում կատարվել է ագրոքիմիական քարտեզագրում, և լաբորատոր հետազոտության են ենթարկվել համայնքի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը: Գյուղատնտեսության բնագավառում ոռոգման

ներտնտեսային ցանցի արդիականացման և վերականգնման ծրագրի շրջանակներում համայնքի բյուջեից հատկացվել է ծրագրի արժեքի 10%-ի համաֆինանսավորում (6 821,4 հազ. դրամ), որի արդյունքում կվերականգնվի ոռոգման ներտնտեսային ցանցի շուրջ 1770մետրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած ընթացիկ գործերին և իրականացված ծրագրերին կան նաև դեռ չլուծված խնդիրներ, որոնք պահանջում են առաջնահերթ լուծումներ՝ համայնքում նոր մանկապարտեզի շենքի կառուցում պետական բյուջեի միջոցների հաշվին, որի նախագծանախահաշվային աշխատանքները կատարվել են 2017թ., արտաքին լուսավորության անցկացում համայնքի Շիրազի 1, Շիրազի 2, Զարյան, Խանզադյան փողոցներում, մշակույթի տան կապիտալ վերանորոգման, տանիքի փոխարինման և դահլիճի վերանորոգման աշխատանքներ, համայնքի փողոցներում ասֆալտապատման աշխատանքներ, որոնք իրենց բացասական ազդեցությունն են թողնում ներհամայնքային կյանքի վրա, բայց, վստահ եմ, որ 2020 թվականը լինելու է ավելի հագեցած տարի և համայնք-բնակիչ, համայնք-պետություն համագործակցության շնորհիվ հնարավոր կլինի հասնել ավելի լավ արդյունքների և ունենալ էլ ավելի զարգացած համայնք:

Ծաղկունք համայնքի ղեկավար՝ Դավիթ Կարապետյան

07.02.2020թ.